

**ՀԱՅՐ ՂՈՒԿԱՍ ԻՆՇԻԾԵԱՆԻ ԱԽԱՆԴԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԱԻԱՌՈՒՄ**

300ամեայ բեղմնաւոր գործունէութիւն ծաւալած Մլիթար-
լեան միաբանութեան բազմաթիւ հայագէտների շարքում իր
ծանրակշիռ տեղն ունի բանասէր, պատմաբան, աշխարհագրա-
գէտ, խմբագիր Հայր Ղուկաս Վրդ. Ինձիճեանը (Աբրահամ Մի-
քայէլեան): Նա իրաւամբ Հայաստանի պատմական աշխարհա-
գրութեան խոչորագոյն հետազօտողներից է եւ նոր ժամանակնե-
րում Հայր Ղեոնդ Ալիշանի հետ միասին արժանի է համարուե-
լու հայ իրականութեան մէջ այդ դպրոցի համահիմնադիրը: Ի
դէպ, եթէ ինչպէս գիտական, այնպէս էլ լայն հանրութեան
շրջանում Ալիշանի անունը մեծապէս ծանօթ է, ապա նոյնը չի
կարելի ասել նրանից շուրջ կէս դար առաջ՝ ԺԼ. դարի վերջին
եւ ԺԹ. դարի սկզբին գործած ու հայագիտական հարուստ ժա-
ռանգութիւն թողած Հայր Ղուկաս ինձիճեանի մասին¹:

Ծնուել է Կ. Պոլսում 1758 Մարտի 21ին աղբիանուպոլսե-
ցի Ինձիճի (մարդարտագործ) Հաջի Միքայէլի որդու՝ Պօղոս
Միքայէլեանի ընտանիքում: Նախնիների մասնագիտութիւնից էլ
ընտանիքն ընդունել է ինձիճեան ազգանունը: Մայրը՝ Տիրուհին
մեծանուն պատմաբան հայր Միքայէլ Զամշեանի քոյրն էր: Ան-
վիճելի է, որ թէ՛ հոգեւոր-եկեղեցական եւ թէ՛ գիտական հար-
ցերում ինձիճեանը մշտապէս կրել է քեռու ազգեցութիւնը:

1 Հայագէտ Նազարէ Պերպերեանի պատկերաւոր խօսքով՝ «Հայր Ղուկաս
ինձիճեան անլինելիօրէն կը հանդիսանայ գլխաւոր ռահվիրաներէն մէկը
ԺԹ. դարու հայոց Ազգային Զարք-օնքին» (ՊէրՊէրԵԱՆ, Ն., Հայր Ղուկաս
ինձիճեան. Միհրաբեամ միաբանութեամ բազմավաստակ ու մեծարժէ՛
երախուաւորը, ի ժամանակ, 2015, 8 Յուլիս):

Հէնց Հայր Միքայէլ Զամշեանի խորհրդով 1770ին Պօղոս Միքայէլեանն իր ուշիմ որդուն ուղարկում է Մխիթարեան միաբանութիւն։ Մի քանի տարի անց՝ 1776ին մշտնջենաւոր ուխտերով դառնում է Մխիթարեան միաբանութեան անդամ։

Հոգեւոր-եկեղեցական ծառայութեան լնիթացքում բուռն գործունէութիւն է ծաւալում նաեւ Կ. Պոլսում: Գործուն մաս-նակցութիւն է ունենում ժողովրդի մէջ հայ գիր եւ գրականու-թիւն տարածելու նպատակին կոչուած եւ պոլսահայ մեծահա-րուսաւ Միքայէլ Զելեբի Տիւզեանի նիւթական աջակցութեանն արժանացած «Արշարունեաց միութեան» ստեղծմանը: Կաթոլիկնե-րի նկատմամբ Օսմանեան կայսրութիւնում սկսուած հալածանք-ների պատճառով վերադառնում է Վենետիկ, դառնում է Միշ-թարեան միաբանութեան փոխառաջնորդ: Հայր Ղուկաս ինձի-ճեանն իր մահկանացուն կնքում է 1833 Յուլիսի 2ին:

Նշանաւոր հայադէտ, յետագայում՝ Աբբահայր Ստեփանոս
արքեպիսկոպոս Ազոնց Գիւղերին աշակերտելու ըրջանում, ինձի-
նեանի մօտ ծնւում է հետաքրքրութիւնը ինչպէս Հայաստանի,
այնպէս էլ այլ երկրների աշխարհագրութեան նկատմամբ: Արդէն՝
1791ին Վենետիկում լրյում է տեսնում Հայր Ինձինեանի առաջին՝
«Տեսուրիւն համառօտ հիմ և եռոր աշխարհագրութեան» աշխատու-
թիւնը: Աշխարհի, ինչպէս եւ Հայաստանի համառօտ պատմաշ-
խարհագրական պատկերը ներկայացնող այս չափածոյ երկը մեծ
հետաքրքրութիւն է առաջացնում, որի համար էլ չուտով մաս-
նակիօրէն թարգմանուում է իտալերէնի ու Փրանսերէնի: Երեք
տարի անց հրատարակւում է «Ամարանց Բիւլզանիեան» գիրքը,
որ եզակի հետազոտութիւն էր Պոսֆորի եւ Տարտանելի նեղուց-
ների, Մարմարա ծովի ջրային հոսանքների, երկրաբանական կա-
ռուցուածքի մասին: Ինքնաստիպ հրատարակութիւն էր նաեւ Հ.
Չուլկաս ինձինեանի մէկ այլ աշխատութիւնը՝ «Պատմութիւն կեն-
դանեաց ի չորս կարգս բաժանեալ ի ցամաքային, ի ջրային, յերկակեն-
ցայ և յօդային» (1801) գերճագրով:

Հայր Ղուկաս ինձինեանը ժամանակակիցների մէջ առանձնանում էր իր առաջադիմական հայեացքներով։ Պատահական չէ, որ 1799ին նա դառնում է Եւրոպայում հայկական առաջին, իսկ «Ազգաբարից» յետոյ հայ իրականութեան մէջ երկրորդ «Տարեգրութիւն» պարբերականի (1799-1802) հրատարակիչ-խմբագիրը։ Ուշագրաւ է, որ ինչպէս «Տարեգրութիւնը», այնպէս էլ նրա փակուելուց յետոյ ինձինեանի հրատարակած միւս՝ «Եղանակ Բիւզանդեան-Բազմավայր» (1803-1820) աշխարհաբարով լրյա ընծագանեան-Բազմավայր»

յուած առաջին հայկական պարբերականներն էին²: Այսինքն՝ ստեղծագործելով գրաբարով, որին նա տիրապետում էր կատարելապէս, Հայր Ղուկաս ինձիճեանը ժամանակի հայ մտաւորականների մէջ առաջիններից էր, ով հասկանալի պատճառներով նախապատուութիւնը տուեց ժողովրդին աւելի հոգեհարազատ դարձած աշխարհաբարին՝ դրանով իսկ դառնալով գրական արեւմտահայերէնի ջատագով անդրանիկ բանասէրներից մէկը:

Շուտով լոյս տեսան Հայաստանի ու երկրագնդի այլ երկրների պատմական աշխարհագրութեանը նույիրուած «Աշխարհագրութիւն» չորփական շարքի տասնմէկ հատորները: Տարիների տիտանական աշխատանքի արդիւնք այդ ինքնատիպ շարքի առաջին, հինգերորդ եւ վեցերորդ հատորները հեղինակել էր Հ. Ղուկաս ինձիճեանը, իսկ մնացածները՝ Հայր Ստեփանոս Ագոնցը: Կարելի է անվարան պնդել, որ այդ աշխատութեան լոյս ընծայումը պատմական իրադարձութիւն էր ոչ միայն հայ, այլ նաև համաշխարհային աշխարհագրութեան ուսումնասիրութեան բնագաւառում:

Պատահական չէ, որ հայրենապաշտ Հ. Ղուկաս ինձիճեանի «աշխարհագրութեան» շարքի առաջին հատորը, որ տպագրուեց Վենետիկում 1806ին եւ նույիրուած էր Ասիա աշխարհամասին, ամբողջապէս ընդգրկում էր Հայաստան աշխարհը: Նախ ընդհանուր գծերով ներկայացւում էր Ասիան, ապա մանրամասնօրէն նկարագրում համաշխարհային քաղաքակրթութեան մէջ կարեւոր դեր ունեցած Հայաստան երկիրը:

Այդ հատորում ընթերցողը ծանօթանում է Հայոց աշխարհի աշխարհագրական դիրքին, սահմաններին, վարչական բաժանումներին, բնակչութեանը, ժողովրդագրական տեղաշարժերին, ցեղակրօնական վերակերպումներին եւ այլն: Հեղինակը առանձնակի ուշադրութիւն է յատկացնում Օսմանեան կայսրութեան պաշտօնական բաժանումների եւ քրդական աշխարհների՝ ցեղապետութիւնների կիսանկախ վիճակի պատճառով ստեղծուած վարչական քառսի վրայ, որի պատճառով յատկապէս տուժում էր հայութիւնը:

Աշխատութեան ամենամեծ արժանիքներից է այն, որ նրանում յստակ տրուում է Հայութեան բոնի իսլամացման, այն է՝ թուրքացման ու քրդացման գործընթացը, Հայկական լեռնաշ-

2 ԾՏԻԿԵԱՆ, Ա., «Եղանակ Բիւզանդիան» տարեգիրքը, (Բանափրական նըշգլբառումներ), ի ՊԲՀ, 1966, թի 2, 173-177:

Խարհը օտար ցեղախմբերով բնակեցնելու, հայերին հայրենի ե-զերքից դուրս մղելու սուլթանական քաղաքականութիւնը: Այդ ամէնի պատճառով ժմարի սկզբին երբեմնի միատարր հայրէնակ Հայաստանն արդէն ունէր խայտարդէտ ժողովրդագրական նկարագիր. «Բնակիչք նորա որչափ ինչ գտանին յազգէս հայոց, - գրում է Հայկական լեռնաշխարհի ցեղային խճանկարի մասին Հայր ինձիճեանը, - գրեք նոյնչափ գտանին եւ ի քրդաց. յետ սոցա են օսմանեանեւ եւ թիւրքմանեւ. գտանին ի մեծ հայո նաև բազում էլզիտիք, եւ ի տեղիս տեղիս ասորիք, ... նաև վիրք ի հիւսիսակողմն մեծին հայոց. իսկ յոյնք սակաւ՝ եւ այն մանաւանդ ի փոքր հայս»³:

Հայաստանում ստեղծուած բարդ ժողովրդագրական իրավիճակի գլխաւոր պատճառներից մէկը, ըստ Ղուկաս վարդապետի՝ Հայկական լեռնաշխարհ քրդական ցեղերի զանգուածային ներհոսքն էր հարաւից. «Գան այլուստ եւ այլ պէսպէս ցեղք վրանարնակ քրդաց, - սարսափով գրում էր նա, - որ յամարայմի սփունին ի լերինս նահանգին (իրզումի - Ա. Մ.), մանաւանդ ի մեծ գոտիս Պիմկէօլայ»⁴:

Վերոյիշեալ իրավիճակը հեղինակի դիտարկմամբ ստեղծուել էր նաև այն պատճառով, որ օսմանեան իշխանութիւնների վարած ազգայնամոլ ձեռնարկումները ստիպել են շատ հայերի կրօնափոխ լինելու: Օրինակ՝ խօսելով էրզրումի նահանգի թորթում գաւառի հայութեան ծանր իրավիճակի մասին Հայր ինձիճեանը մատնանշում է, որ այնտեղի բնակիչները «ձանձրացեալք ի բռնութենէ եւ ի զրկանաց, դարձան առ հասարակ ի կրօնս տանկաց»⁵: Նոյն իրավիճակն էր այլ գաւառ-գաւառակներում. Կամախի այսպէս կոչուած տաճիկները «... ըստ մեծի մասին դարձեալ են ի հայոց»⁶: իսկ թերդագրակ գաւառակի «Բնակիչք նոցա առ հասարակ էին յազգէս հայոց, այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տանկութիւն եւ սակաւ մնացին ի քրիստոնէից»⁷:

Հայր ինձիճեանը բազմաթիւ փաստեր է բերում Արեւմտեան Հայաստանի երբեմնի բարգաւած վիճակի եւ անհամար քրդական

³ ԻնձիճեսԱն, Հ. Դ., Աշխարհագրութիւն չորից մասամց աշխարհի, Ա., Ա. Ղազար, Վենետիկ 1806, 14-15:

⁴ Անը, 64:

⁵ Անը, 93:

⁶ Անը, 101-102:

⁷ Անը, 131-132:

միջցեղային բախումների, պետական պաշտօնեաների կողմից կեղեքումների աղէտալի հետեւանքների մասին։ Այսպէս՝ Երզնկայի գաւառն «յառաջագոյն ուներ 250 գիւղօրէս. այլ այժմ ի պատճառս կեղեկելոյ իշխանաց, բազում գիւղօրէք նորա լինալ կան եւ անմարդաբնակ, եւ գիւղօրէք ինչ կործանեալ, կամ ըստ կիսոյն քայլալք»⁸։ Բաւական է նշել, որ 1762ին Մանագլերտի շղանում քըրդական միջցեղային բախումների հետեւանքով ոչնչացուել է 360 հայկական գիւղ⁹։

Յեղակրօնական վերակերպումների գործընթացները բացայացելու տեսանկիւնից Հայր Ղուկաս ինձինեանի հետազօտութիւններն ունեն գիտաքաղաքական նշանակութիւն։ Նրա ուսումնասիրութիւնները բերել են այն համոզման, որ կոօնափոխուելուց, գաւանափոխուելուց կամ ազգափոխուելուց յետոյ հայքնակչութեան մի ահռելի զանգուած Հայաստանում շարունակել է պահպանել իր հայկական ինքնութիւնը։ Անդրադառնալով Ախալցինայի նաշանգում տեղի ունեցած էթնոգործընթացներին՝ Ղուկաս վարդապետը համոզուած գրում է, որ տեղի թուրքերը՝ տաճիկները, սերում են հայերից ու վրացիներից։ Բացի այդ, վրացիների մի մասն էլ ունի հայկական ծագում։ «Գիւղօրէք այսր նահանգի սակաւ։ Բնակիչն նոցա ըստ մեծի մասին տաճիկի, դարձեալիք գրեթէ առ հասարակ կամ ի հայոց եւ կամ ի վրաց. են գիւղօրէք բնակեալիք մինչեւ ցայժմ ի բրիստոնեից հայոց նաեւ ի վրաց, որք գրեթէ առ հասարակ սերեալ երեւին ի հայկազնաց։ Քանզի ի վերջին ժամանակս կործանելոյ տէրութեան մերոյ՝ այս նահանգ եղեւ պատսպարան բազմութեան իշխանաց մերոց, նաեւ հասարակ ժողովրեան, որք ապա սակաւ առ սակաւ սովորեալիք ի լեզու ի բարս, նաեւ ումանիք ի ծէսս վրաց, փոխեցան յազգ նոցա»¹⁰։

Հայր ինձինեանի ծառայութիւններից մէկն էլ ծպտեալ հայերի մի ստուար շերտի բացայացումն էր, որոնք յայտնի էին մասնաւրապէս «Հէսկէսներ» անունով։ Պոնսասի լեռների արեւելեան շրջանում՝ Համշէն գաւառում ապրող արդ հայութեան մի ստուար զանգուած, որ գեռ ժէ. դարում եւ ժէ. դարի սկզբներին իսլամ էր ընդունել, այսօր էլ տասնեակ գիւղերում գեռ հայախօս է։ «Համշէն։ Բնակիչն երկրին յառաջագոյն հայ էին, - կարդում ենք «Աշխարհագրութիւնում», - այլ ի յնս ժէ. դարուն եւ ի

8 Անդ, 98:

9 Անդ, 112:

10 Անդ, 123:

սկիզբն Ժ. առ հասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիտօրէիւք դարձան ի տաելութիւն սակա բոնութեան հարկապահանջութեան, բայց գտանձն տակաւին ի ենսա եւ քրիստոնեայք... իսկ տաելիկ խօսին մինչեւ ցայժմ հայերէն..., պահեն պահս, եւ զայլ ծէս եւ օրէնս քրիստոնէական հաւատոյ, յանախեն յեկեղեցիս..., ոմանք կեսկէս են հաւատովք, արտաքուստ միայն ցուցանելով գտանձնութիւն»¹¹.

Բաւարարուելով «Աշխարհագրութիւն» աշխատութեան առաջին հատորի քննութեամբ, նշենք որ ինչպէս Հայր Ղուկաս վարդապետի, այնպէս էլ Հայր Ստեփանոս Ագոնցի հեղինակած հատորները դարձան երկիր մոլորակի աշխարհագրութեան ու պատմութեան վերաբերեալ հայերէնով գրուած իւրօրինակ ու անփոխարինելի դասագրքեր եւ այսօր էլ շարունակում են մնալ որպէս սեղանի գրքեր պատմական աշխարհագրութեամբ զբաղուող մասնագէտների համար:

Ինչպէս տեսանք, վերոյիշեալ հատորում ինձիճեանը ցաւով ներկայացնում էր Ժ. դարից մինչեւ Ժթ. դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած ոչ հայանպաստ ժողովրդակրական գործընթացները Հայաստանում: Այդ ընթացքում նա յանձիս անդրադառնում էր նախորդ ժամանակներին՝ յիշելով Հայաստանի ընդարձակ տարածքն ու բարգաւաճ վիճակը: Ուստի պատահական չէ, որ շուտով փորձառու աշխարհագրագէտը ձեռնամուխ է լինում հին եւ միջնադարեան Հայաստանի պատմական աշխարհագրութեան վերաբերեալ աշխատութիւնների ստեղծմանը:

1822ին լոյս է տեսնում Հ. Ղուկաս ինձիճեանի նշանաւոր մէկ այլ աշխատութիւն՝ «Ստորագրութիւն իին Հայաստանայց» վերտառութեամբ: Յունահումչական, ասորական հայկական ու այլ աղբիւրների համադրութեամբ հեղինակը ներկայացնում է Մեծ Հայքի պատմաաշխարհագրական նկարագիրը՝ բոլոր 15 նահանգ-աշխարհները՝ իրենց գաւառներով, սահմաններով, օգտակար հանաձնութեամբ, բնակլիմայական պայմաններով, եկեղեցիներով՝ ու

11 Անդ, 396: Յետագայում «կեսկէսների» մասին Ղ. Ինճինեանի հետազոտութիւնները խորացրեց Միջիարեան վարդապետ Յակովոս Տաշեանը (ՏԱՇԵԱՆ, Յ., Հայ բակչութիւնը Սև ծովէն մինչեւ Կարին, Վիեննա 1921: Նոյն, Տայք դրացիք եւ Խոսորդուր, Վիեննա, 1978: «Կեսկէսների» մասին տես նաև ՄԵԼՔՈՆԵԱՆ, Ս., Երգում. Երգումի նահանգի եայ ազգաբանականութիւնը 19-րդ դարի առաջին երեսամնակին, Երեւան 1994, 52-88:

վանքերով, յիշարժան պատմական իրադարձութիւններով, կատարում է տեղանունների ստուգաբանութիւն, տեղագրում բնակավայրերը եւ այլն:

Աշխարհագրագէտը իւրաքանչիւր աշխարհի կապակցութեամբ վկայակոչում է անգամ սկզբնաղբիւրներում առաջին հայեացքից կարեւորութիւն չներկայացնող ամէն մի տեղեկութիւն, առանձնացնում յատկապէս տուեալ վարչական միաւորին առաւել բնորոշ երեւոյթները: Օրինակ՝ Վասպուրականի վերաբերեալ Հայրինձինանը գրում է. «Մեծ է քան զայլ ամենայն նահանգու Հայոց, եւ աքոռ առանձին քագաւորութեան եւ կարողիկոսութեան եւ զի սեպհական է Արծրունեաց տոհմի, կոչի եւ Աշխարհ կամ Երկիր Արծրունեաց»¹²: Հայրենասէր գիտնականն առանձնակի հպարտութեամբ է գրում կենտրոնական աշխարհի՝ Այրարատի մասին՝ յիշելով պատմիչ Ղազար Փարագեցու խօսքերը. «Հասաք ի ստորագրել պվերչին նահանգ Մեծին Հայոց հոյակապ, հոչակաւոր եւ ականաւոր անուանեալ ի Ղազարայ»¹³:

Յատկանշական է, որ «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատութիւնը փաստորէն Հայաստանի աշխարհագրութեան ընդհանուր խորապատկերի վրայ Հայոց հին ու միջնադարեան պատմութեան զուգահեռ շարադրանքն է: Զարմանք է առաջցնում ամէն մի նահանգի, գաւառի, բնակավայրի աշխարհագրութիւնն ու պատմութիւնը ներկայացնելիս հեղինակի բծախնդիր վերաբերմունքը հնարաւոր բոլոր աղբիւրների տուեաներն անպայման շրջանառելու, դրանք քննաբար օգտագործելու եւ ճշշմարտութիւնը գտնելու հարցում: Ընթերցողի մօտ ինչպէս այս, այնպէս էլ այլ աշխատութիւններին բնորոշ ինձինեանական արդու ընթերցողի մօտ առանձնակի հետաքրքրութիւն ու գրաւչութիւն է առաջացնում: Օրինակ՝ երբ հեղինակը ներկայացնում է Վասպուրական աշխարհը, իւրաքանչիւր բնակավայրի հետ կապուած շարադրում է Արծրունեաց թագաւորութեան պատմութիւնը: Սիւնիքի աշխարհագրութիւնը չ. Ղուկաս վարդապետը շաղկապում է Սիւնեաց, Այրարատինը՝ Արշակունեաց ու Բագրատունեաց հարսառութիւնների պատմութեանը: Նման մեթոդաբանութեամբ հայրենապաշտ հեղինակն ընդդժում է հայոց հին ու միջնադարեան պետականութեան փառքն ու հզօրութիւնը:

12 ԽնձիձեԱՆ, Հ. Դ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Ա., Ա. Ղազար, Վենետիկ 1822, 156:

13 Անդ, 376:

Հայր Ղուկաս Ինձիձեանի աներեւակացելի աշխատասիրութիւնը շուտով հապարակ է հանում եւս մէկ ստուարածաւալ աշխատութիւն՝ «Դարապատում»ի ինը հաստափոր գրքերի շարքը (Վենետիկ, 1824-1828), որ ժԼ. դարի երկրորդ կէսի, այսինքն՝ հեղինակի պարած ժամանակաշրջանի համաշխարհային պատմութեան հայերէն առաջին բարձրորակ ու հանգամանալի շարադրանքն է: Ինձիձեանն այդ վիթխարի հետազօտութեան նախաբանում նշում է, որ հայրէնի պատմութիւնից զատ ամէն մի բանասէր մարդու համար խիստ շահեկան է նաեւ համաշխարհային պատմութեան իմացութիւնը: Հայր Ղուկասն այդ կապակցութեամբ գրում է. «Սորպյան բարետում արգասիք որչափ հարկանքի եւ օգտակարք՝ նոյնչափ եւ առաւել պակասեալ գտանին յարամեանս մեր բարբառ, յորում հազիւ է տեսանել զիւրոյ ազգին պատմութիւն, իսկ սակա այլոց ազգաց ընդ համօրէն աշխարհ սփուլոց՝ գրեթէ համակ վերջացեալ տեղեկութիւն, որ արդարեւ ցաւալի պակասութիւն ասասցի»¹⁴:

Զանդրադառնալով Հայր Զ. Ինձիձեանի բազմաթիւ ու բազմաբնոյթ այլ աշխատութիւններին՝ համառօտ կանգ առնենք եւս մէկի վրայ, որ լոյս տեսաւ հեղինակի մահուանից յետոյ՝ 1835ին եւ հանդիսացաւ Հայաստանի պատմաաշխարհագրական, ազգագրական, բանասիրական, ժողովրդագրական բնոյթի աշխատութիւնների ինքնատիպ ու ամփոփ հաշուետուութիւնը: Խօսքը «Հընախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատոր հետազօտութեան մասին է:

Ի տարբերութիւն Հայր Ինձիձեանի այլ աշխատութիւնների, «Հնախօսութեան» մէջ պատմաաշխարհագրական հարցադրումներից բացի փաստորէն կարելի է գտնել Հայաստան աշխարհի հետ կապուած ամէն տեսակ նիւթ: Հեղինակը հանգամանօրէն անդրադառնում է բազմալեզու աղբիւրներում Հայոց աշխարհի անդրադառնում է բազմալեզու աղբիւրներում Հայոց աշխարհի (Հայք, Հայաստան, Թորգոմայ տուն, բոլոր անուաննումներին (Հայք, Հայաստան, Արմենիա, Արմենիա, Արամայ երկիր, Այրարատ եւ այլն), պատմական սահմաններին, լեռնագրութեանն ու ջրագրութեանը, տնտեսութեանը, մարդկանց կանց կենցագլին եւ այլն: Եթէ նախորդ երկերում Հ. Զ. Ինձիձեանը ժողովրդագրական խնդիրները շօշափում էր հարեւանցիօրէն, ապա այժմ առանձին բաժին է յատկացնում բնակչութեան

14 Ինձիձեսն, Հ. Պ., Դարապատում. Աշխարհամար կամ ընդհամուր պատմութիւն, Ա., Ս. Դազար, Վենետիկ 1824, 5:

տեղաբաշխման, ցեղային կազմի, տեղաշարժերի եւ այլ հարցերին: Առաջին հատորի իններորդ եւ տասներորդ գլուխները, որոնք համապատասխանաբար վերնագրուած են «Բնակիչն Հյաստանեայց» եւ «Սակաւամարդութիւն բնակաց», նույրուած են Հայաստանի պատմական ժողովրդագրութեանը եւ ամբողջապէս գիտական նորոյթ են: Հետազօտողն ուշադրութեան է արժանացնում հնագոյն ժամանակներից Մեծ Հայքում տեղի ունեցած ժողովրդագրական ամէն մի տեղաշարժ, քննութեան է ենթարկում օտար ցեղային տարրերի ներթափականցման կամ հայերի արտադադիր վերաբերեալ իւրաքանչիւր դրուագ:

Երկրորդ հատորը վերաբերում է հայկական թագաւորութիւնների ու իշխանութիւնների պատմութեանը, իսկ երրորդը՝ Հայոց լեզուի, դպրութեան, արուեստի, կրօնի, եկեղեցու հարցերին:

Պատմական ժողովրդագրութեան հարցերը վերլուծելիս Հ. Ղուկաս վարդապետը նշում է, որ Հայաստանի աշխարհագրական դիրքի պատճառով երկրի բնակչութիւնը մշտապէս չարժման մէջ է եղել՝ բազմաթիւ օտար ժողովուրդներ ու ցեղեր (փիւնիկեցիներ, ասորեստանցիներ, հրեաներ, մարեր, պարսիկներ, սկիւթներ, ալաններ, ճաներ, քրդեր, կայսիկներ, ութմանիկներ եւ այլք), որոնց ամենայն բժախնդրութեամբ անդրադարձ է կատարուում, անընդհատ ներխուժել են Հայոց երկիր, բնակութիւն հաստատել այնտեղ կամ հայութեանը բռնագաղթեցրել իրենց բնօրինանից: Այդուհանդերձ, Հայոց լեռնաշխարհը շարունակել է մնալ գերազանցապէս հայաբնակ եւ հայաշունչ: Բանն այն է, որ Հայաստանը, ըստ Հայր Ինձինեանի՝ ունի աստուածային ծընունդ: առաջին անգամ այնտեղ՝ դրախտում, մարդ արարածն է առաջացել, երկրորդ անգամ՝ համաշխարհային ջրհեղեղից յետոյ ոչնչացումից փրկուել ու վերակենդանացել է մարդկային հասարակութիւնը: «Պատմութիւն առաջին բնակութեան համօրէն մարդկային ազգի յառաջին բնակութեան համօրէն մարդկային ազգի. զի Աստուած կամելով ընտրել բնակարան բաշադիպ առաջին մարդոյն Ադամայ զոր ստեղծ, զայաստան ընտրեաց»¹⁵:

Հեղինակն առաջնակի ցաւով է գրում գաղթականութեան մասին, որ նա համարում է Հայոց երկրի «սակաւամարդութեան»

¹⁵ Ի՞նչիձենն, Հ. Դ., ՀՅԱԽՈՍՈՒԹԻՒՆ աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Ա., Ս. Ղազար, Վենետիկ 1835, 244:

գլխաւոր պատճառը: Յատկանշական է, որ բոլոր օտար նուաճողների արշաւանքների մէջ Հայր Ինձիճեանն ամենաաղէտալին համարում է ԺԱ. դարում սկսուած թուրքականը, որ նա անուանում է պարսկական՝ նկատի ունենալով սելջուկ-թուրքերի Պարսկաստանից Հայաստան ներթափանցելու հանդամանքը. «Դարն մետասաներորդ, որ է ժամանակ ի վեր երեւելոյ Պարսից Տուրքիանց՝ եղեւ արդարեւ դար կործանման տէրութեան մերոյ եւ ցիրուցան սկսելոյ ազգիս մերոյ»¹⁶.

Ամփոփելով՝ կարող ենք հաստատապէս պնդել, որ Ժ. դարի վերջին եւ ժթ. դարի սկզբին Հայր Ղուկաս Ինձիճեանը, շարունակելով Մխիթար Աբբահօր ստեղծած աւանդոյթները, Հայր Միքայէլ Զամչեանցի հետ միասին նոր բարձրութեան հասցրեց Հայ պատմագիտութիւնը եւ իր հերթին դրեց նոր ժամանակներում Հայաստանի պատմական աշխարհագրութեան եւ ժողովրդագրութեան բնագաւառի հետազոտութիւնների հիմքերը: Վերջիններիս թողած հարուստ գիտական ժառանգութիւննը Մխիթարեան տիտաններից Հայր Ղեւոնդ Ալիշանին ժթ. դարի երկրորդ կէսին Հանրաւորութիւն տուեց Հայագիտութեան այդ բնագաւառուների ուսումնասիրութիւնը հասցնել դասական մակարդակի:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵՍՆԱ

¹⁶ Անդ, 339:

Summary

Fr. GHUKAS INCHICHYAN'S CONTRIBUTION IN THE STUDY OF HISTORICAL GEOGRAPHY AND DEMOGRAPHY OF ARMENIA

ASHOT MELKONYAN

During the 300-year-long fruitful activity on San Lazzaro island in Venice, the Mechitarist Congregation has given many eminent Armenian scholars. Father Ghukas Injijian (1758-1833) is distinguished among them with his outstanding contribution to the study of historical, geographical and demographic issues of Armenia. Among his dozens of studies, the first volume of "The Geography of Four Parts of the World" is especially notable, concerning Armenia. Father Injijian is truly the founder of the Armenian historical geography and demography of new times.

Archimandrite Ghukas was also the founder of the first "Chronicle" magazine in Europe (the second one in the Armenian world), which became the first Armenian magazine in modern Armenian language.